



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1295



1888

6122

ԾԻԱԿՈՏԸ

ԵԿ

ԻՒՐ ՎԱԱՍՆԵՐԸ

2002

ԳՐԵՑ

ԿՈՍՏԱՆԴԻՆ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

1100  
110283/  
6715-58



ՇՈՒՇԵ

ան Հայոց Հոգ. Տեսչութեան

1383

613.84
Մ-50

ՀԱՐԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՊՈՅԱՆԱԿԱՆ ԲՈՅԱԼՈՒԹԵԱ  
7/II-1922  
ԵՐԵՎԱՆ, ԽԱՆԿԱՆԱ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2010

33460-4 L.

ԵՐԱԿԱՆ

40

ՀԱՅՈՒԹԻՒՆ. ՊՊ  
Дозволено цензурою 31 Мая 1888 г.

Г. Тифлис.

8578

ՏԻՎԱԿԱՆ ՊՐԵՍՍ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Տիպոգրաֆія Шушин. Армян. Духовн.  
Відомства.

4333

610  
147-06

613.84  
5-59

ԿԵՐ

Կ. Կ. ՄԻԼԻՔ-ՆԱՀԻՆԱՂՄԱՐԵԱՆց

ԾԽԱԽՈՏ ԹԷ ԹՈՅՆ

ՀԵՂԻ ՎԵ ՏԱԿԱՅԱԾ

Առաջ ու ամենի անդրանիք մի ամ թի  
 անձնուց պահպանական աշխատ պահպանին  
 այս խորհ գով ու առ ժամանակաւող  
 ըստ կայծական պահպանական աշխատ պահպանին  
**ՆԽԱԽՈՏԸՑ ԿԱՄ ԹԱՄԲԱՔՈՒՆ:** առաջ  
 առ արևո իշխանութեա ժամանակաւող  
 ըստ անձնուց ու Ա. զոհ բնել զոհ Ա. Ա. Հ.  
 առ անձնի և Ա. անձնի բարեկարգ մի ցո  
 տու մ ազգի պահպան աշխատ խանու  
 և անձնուց ու մ առ աշխատ խանու  
**ԾԽԱԽՈՏԻ կամ թամբաքուի գործա-**  
**ծութիւնը գնալով աւելի ընդհանրանում**  
**աւելի տարածվում է Առվկասեան բնակիչ-**  
**ների և մասնաւորապէս մեր Հայերի մէջ:**  
**Զարմաննալի է տեսնել թէ ինչպէս այդ**  
**ախախն գիւղաւ և նթարկվում է թէ 12**  
**տարեկան գալուցի աշակերտը թէ երե-**  
**տասարդը և թէ ծերունին կանոպք և**  
**կարծէս չեն ուզումյետ մնալ այդ նորա-**  
**ձեռթիւնից և մրցում են թէ ծիերով**  
**և թէ իբրև բռնոթի քաշելով**

Թէ ինչ մի զուարձութիւն են զ զում  
ծխողները կամ բանոթաքաշները օրական  
բուականաշափ ծուխ կուլ տալով կամ  
ըիթ պոռնգ բանոթաթախ անելով՝ այդ  
մինչեւ այսօր մեզ համար գաղանիք ճնաց,  
միայն որչափ հետազակով տեղեկա-  
ցել ենք, եկել ենք այս եղբակացութեան,  
որ մի գասակարդ ծխում է միայն ժա-  
մանակ սպանելու համար, ինքն էլ լոսու-  
տովանելով, որ ոչ մի զուարձութիւն չէ  
զանում զլու մէջ և բացի զբանի վնասը՝  
ուրիշ մի օդուտ չունի. մի երկրորդ դա-  
սակարդ նորաձեւութեան անձնատուր ե-  
ղած՝ ծխել է և այլ և չէ կարողանում  
ձեռք վերցնել և նրա համար այժմ մի  
կենսական պահանջ է դառել երկրորդ  
դասակարգը՝ որի մէջ մանում է զինա-  
ւորապէս երիտասարդութիւնը, ծխում է  
ծխած լինելու համար, որ ընկերից չը-  
ընկնէ, ինքն էլ մարդարիջի երեաց, վեր-

ջտապէս ծխելուն մի առանձին նշանակու-  
թիւն է տալիս, որին իւր լիեբն էլ չի  
հասնում և մենջապէս մի չպարզ գա-  
սակարդ առողջապահիկ միջոց է համա-  
լում և յամառաբար պնդում իրավութէ  
ծխել կենաբոնացնում է մասաւոր ուժերը  
նպաստում մարսողութեան. կազմուում  
թուլացած մարմինը և մինչեւ անդամ բա-  
նաստեղծական ոգի ներշնչում...

Թէ որչափ իրաւացի է ծխողների այս  
ունայն կարծիքը որչափ օգտակար կամ  
վնասակար է թամբաքուի գործածու-  
թիւնը, այդ կաենանէ ընթերցողը մեր չե-  
տեւալ համառօտ տեսութիւնից որի մէջ  
մասը քաղուածօրէն փոխազբում ենք դօք-  
տոր Ա. Ռիսանի<sup>1)</sup> և Կազմանի Համալսարանի  
պրօֆէսօր ի. Մ. Գոգիի<sup>2)</sup> գրուածներից:

1) A. Riant, Falcoöf et le taïbas. Paris 1879.

2) Прфес. И. М. Догель. Табакъ, какъ при-  
хотъ и несчастіе человѣка. Казань 1886.

Բ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Տիախոսի բօյսը կամ թամբաքուն  
[tabacco, tabaccum, табакъ] իրեն անունը  
ստացել է մի քանիսի կարծիքով Տաբադո  
կղզու անունից, միւսների կարծիքով Ա-  
մերիկայի Տաբակի գաւառից: Ալ Հում-  
բողի ասելով տաքակիօ անունը  
Հայտի կղզու բնակիչները տալիս են  
Ճիւամորշին (Ճիրուխին), որով Ճիւում  
են և թէ Սպանացիք այդ անունով Ճա-  
նաչել են նոյն իսկ բօյսը: Մեկակացիք  
Ճիւախոտին պետուն [petun] են ասում,  
իսկ Լատիներէն անունը նիկոտինա  
տաքակում [nicotiana tabacum] առա-  
ջացել է, ժան Նիկօ Փրանսիացի հիւպա-  
տոսի անունից, որ առաջին անդամ Փոր-  
թուգալիայից Ֆրանսիա ուղարկած է

թամբաքուի բանոթին Կատարինէ Մեղի-  
չի թագուհու համար:

Թամբաքուի հայրենիքը Ամերիկան է.  
պատմութիւնը ասում է 1492 թուին  
երբ Սպանացիք ոս գրին Նոր Աշխարհը,  
զարմացած մնացին տեսնելով որ տեղա-  
ցիները մի մե զանակ բերաներին,  
մի ծայրն էլ վառ՝ ծխում են: Կարծ մի-  
ջոցում իրենք էլ ծիել սովորութիւն ա-  
րին և վերաբարձին այդ բօյսի սերմերը  
իրենց հայրենիքը փոխազրեցին, որտե-  
ղից հետզհետէ ապահովեցաւ թէ նւ-  
րովա և թէ Ասիա այսպէս օրինակ  
1560 թուին մուտ է զանում Ֆրանսիա,  
1570-ին Հոլանդա, 1585-ին Անգլիա,  
1605-ին Տաճկաստան. 1612 Օռուսա-  
տան, իսկ 1617-ին Հնդկաստան, Չինաս-  
տան և ամբողջ արևելք:

Այժմ Ճիւախոտը տարածուած է երկա-  
գնդի բոլոր աշխարհներում և ամեն տեղ

ունի իւր երկրագաղաւները:

Սկզբում ծխախոսին կամ բանոթուն հրաշագործ զօրութիւն էին տալիս. նա այնպիսի մի գեղ էր Համարվում որ բրդշկում էր իրեւ թէ ամեն ահանկ ցաւեր սակայն զիառութեան շնորհիւ պարզուեցաւ նրա մեսակարսութիւնը մարդի առաջնութեան վերաց և այդ իսկ պատճառաւ հէնց սկզբից ունեցաւ իւր զօրաւոր Հակառակորդները որոնք դատապարտեցին իրեւ թոյն և պատճական օրէնքով խստիւ արդեւեցին ծխելու որ չտարածուի:

Այսպէս Հենրիկոս Բ. սպառնում է մըտ լսակաշար անել ծխողներին:

Եղիսաբէթ թագուհին գրաւել էր տալիս ծխամնուներն ու բանոթամանները:

Պարսից Ամուբագ շահը բանոթաքաշների քիթը կարել էր տալիս իսկ ծրխողների շըթունքը պատճում:

Մոսկուայի իշխանները և թաղաւորներ խստիւ արդեւում էին ծխելն ու քաշելը:

Ետակեայում Ուրբանոս Բ. պատը հարզորդութիւնից զրկում էր եկեղեցում բանոթի քաշողներին և Խլել տպիս նըրանց բանոթամանները սրճնք այն ժամանակ զուտ ոսկուց կամ արծաթից էին շնուռած և թանգարին քարերով զարդարած:

Ֆրանսիայում Խուզովիկոս Ժ. ի ժամանակ ոստիկանութիւնը հրամանազրել էր որ բացի գեղալաճառանոցները ոչ ոք իրաւոնք չունենայ ծխախոտ ծտիւելու:

Տաճկաստանում սկզբները ծխողներին պատճում էին նրանով, որ քիթը ձեզքում էին և ծխամնը մեջը անցկացրած՝ էշի վերաց նասացնում, ման ածամի իսկ վերջը մաշտանե պատիւ սկսեցին նաև նորիկել միայն Մահմետ Դ-ի ժամանակ

թոյլտութիւն եղաւ ծխելու։  
Սակայն, չնայելով այդ ամեն խստու-  
թիւններին, ծխելու կամքաշելու ախտը  
խոր արմատներ ձգեց և զարմանալի ա-  
րագութեամբ տարածուեցաւ ամեն տեղ,  
ամեն ազգերի մէջ. այնպէս որ 1855  
թուին մի վիճակազրի հաշւով երկրադն-  
դի վերայ ծխվում էր իչս միլիարդ լուր-  
լու ծխախոտ, իսկ 1867-ին այդ թիւը  
բարձրացաւ մինչև մի միլիարդի։

Մի ուրիշ վիճակազրութիւն ցոյց է  
տալիս, որ երկրագնդի վերայ տարեկան  
սպառվում է 17 միլիոն պուդ ծխախոտ  
և թէ Անգլիայում տարեկան ինչ զումա-  
րի ցորեն է սպառվում բոլոր բնակիչների  
համար, այնքանի ևս ծխախոտ է գնում։

Միայն Փարիզում հաշվում են օրական  
500 հազար լուրլու ծախը, մի գումար՝  
որով կարելի էր երկու միլիոն ժողովուրդ  
կերակրել։

1884 թուականին Ռուսիայում 432  
ծխախոտի գործարաններում ստացուել  
է մօտ չորս միլիոն պուդ թամբաքու,  
որից երեք միլիոն երեք հազարը մա-  
խորիս կամ հասարակ ծխախոտ է եղել  
իսկ մնացածը միջին և լաւ տեսակից.  
մաքս վճարուած է աշխութեան մօտ  
18 միլիոն լուրլի։

Թամբաքու ծխող ազգերի համեմատա-  
կան հաշիւը ցոյց է տալիս, որ Աւստրիա-  
յում մարդազլուխ դալիս է մօտ 4 ֆունտ  
ծխախոտ, Ֆրանսիայում մօտ 2 ֆունտ,  
իսկ Փարիզում  $4\frac{1}{2}$  ֆունտ, Իտալիա-  
յում  $1\frac{3}{4}$  ֆունտ, Ռուսաստան 40 զօ-  
լունիկ (մսխալ)։

Մի Ֆրանսիացին, ասում է Նվալիէն,  
ծխում է այնքան, որքան մի ոուս, եր-  
կու անզամաւելի քան մի իտալացի, երեք  
անզամքիչքանգերմանացինկամշունդա-  
ցին, չորս անգամպակասքան մի բելճիքացի։

ՀՅԴ Նայեցիսամ մինչիւնով 1881  
Մարտաս Նայեցիսամ գյուղացը պատշաճ ծ  
ուզացնեած բար մահիւ սպա տօն և  
տօն պյուրաց գոյն մահիւ գոյն բար  
ՕԽԱԽՈՏ ԵՒ ԻԽ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ:

Եթիւնամ առ և մէջիւ դժուկամ իւն  
տօն մահիւն առ և մահիւ դժուկամ իւն

Ծխախոտի տեսակները շատ են նայե-  
լով տեղին, կլիմացին և պատրաստու-  
թեան եղանակին. Կրանք զանազանվում  
են միմեանցից իրենց տերեներով ու  
գոյնով, ծաղկով, հոտով ու պարունակուծ  
նիկոտին ասուած թոյնի քանակու-  
թեամբ:

Ծխախոտի ամենաընտիր տեսակները  
համարվում են Կուբայի և Հաւանի,  
որից թանգարին սիգարներ են պատրա-  
ստում, Պորտուրիկոյին, Տաճկատանի  
Ենիդիէ-Գարանու ասուածը, Տրապի-  
զոնին և Սամոնը, Պարսկատանի Շի-  
րազին, Հարաւային Ամերիկայի Կա-

նաստեր կոչուածը և այլք:  
Ծխախոտը յաջողութեամբ բանում է  
տաք և բարեխառն կլիմացի մէջ, ուր ա-  
ձում է խաղողի վաղը. սիրում է աւելի  
խոնաւ, փերուն ու պարարտ հողը:

Ծխախոտի սերմը ցանում են Փերուա-  
րից մինչև Ապրիլ ամիսը տնկանցի մէջ.  
Երեք ամսից յետոյ փոքրիկ բոյսը հա-  
նում են և առաջուց լաւ պարարտա-  
ցրած հողի մէջ հեռի հեռի շարքերով  
տնկում: Երբ վերան մօտ տասն և երկու  
տերեւ է բացվում, ծաղկելուց առաջ, պլ-  
իլից կտրում են, որ սժժը տերեների փե-  
րայ հաւաքուի, այդպիսով տերեւը արշ-  
նաչափ երկարում է և բաւականին լայ-  
նանում:

Օգոստոս կամ Սեպտեմբեր ամսին սկը-  
սում են տերենի քաղը. Կախ հաւաքում  
են հողին մօտիկ տերեները, որ յաճախ  
կեղտուած են լինում և պահում առո-

րին տեսակ ծխախոտի համար, ապա  
քաղում մնացածները:

Քաղից յետոյ մաքում, ջոկջոկում են,  
յիսուն կամ հարիւր հատը միասին թե-  
լի անցկացնում և բացօթեայ տեղ կա-  
խում որ չորանան: Չորսնալուց յետոյ  
ծախում են գործարաննելում կամ ուր  
որ թամբաքուի մենավաճառ է, այսինքն  
միայն աէրութեան իրաւունքի տակն է  
ծխախոտի վաճառումը՝ զբա համար  
յատկացրած հաստատութեան յանձնում:

Գործարանը համնելուց յետոյ տեսակ-  
ների են բաժանում, այն է սիգարի, պա-  
պիրոսի, մախորկի և բունթու համար  
և այդ ևս բաժանում լաւ միջակ ու  
վատի այնուհետեւ դրանց աղաջուր են  
սրսկում, լուանում և մեքենաների մի-  
ջոցաւ կտրատում ու մի ամաչափ պա-  
հում գտալսուած, որ խմորուի:


Սիգար, պապիրոս ու բոնթի շնորու-

համար առանձին գործովութիւններ են  
կատարվում և ամեն գործարան ունի  
իւր յատուկ ձևերը:

Պէտք է առել որովախանու-  
թեան մէջ քիչ չեն և կեղծ ծխախոտնե-  
րը շատ ծառերի և բոյսերի տերեւ,  
ինչպէս կաղամբի, ձակնդեղի, կարտոփեղի  
և այլոց՝ ներկուած թամբաքաջրի մէջ  
թրջոց զրած խտոն են իսկականի հետ:  
Չնայելով որ թամբաքուն լուանում են  
և թողնում որ խմորուի (брожենի), որի  
նպատակն է նիկոտինի մի մասը պա-  
կասացնել այնու ամենայնիւ այդ թոշ-  
նից գեռ բաւականաշափ մնում է ծխա-  
խոտի մէջ. այնպէս որ:

Յրանսիւսկան ծխախոտը պարունակում  
է իւր մէջ նիկոտին . . . 6—8 100-ին

Պիրզինսկային . . . 7 . . . —  
Կիսումնեն 10315 գրիշուրիս 6 . . . —  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՈՒՐԱԿԱՆ ԲՈԼՈՅԵՐԵՐԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԱՐԱ ԱՆԴՐԱ



Մարիլանդին . . . . .  $2\frac{1}{3}$  100-ին  
Հաւանին . . . . . 2 . . . . .

Առհասարակ բարձր տեսակների մէջ  
առելիք քիչ է նիկոտինը քան ստորին տե-  
սակներում:

Բացի նիկոտինից, ծխախոտի աերելը  
պարունակում է իրեն մէջ նիկոտեա-  
նին կամֆարի տեսքով, ամմի ակ, կա-  
լի, նատր, կիր, մագնի և երկաթ,  
ծծմբային, աղային, բնածխային,  
փոսփորի, քացախի և այլ թթւուտ-  
ներ. իսկ իրեն ծխի մէջ բացի վերո-  
յիշեալները և հետեւալ կատաղի թոյ-  
ները, այն է սինիլի թթւուտ, ած-  
խային թթու, փէնօլ և կրէա-

**գօտ:**

Թէ նիկոտինը արգարե վտանգաւոր  
թոյն է, այդ ցոյց են առլիս հարիւստ-  
ուր փորձերը կենդանիների վերայ. այս-  
պէս օրինակ տեսնում ենք որ  $\frac{1}{2}$  կաթիլը

բաւական է զամփո շունը, աղուէսը, կամ  
կատուն սպանելու համար, 1—2 կաթիլը  
ձին և կովը. թոշունները նիկոտինից  
ջղաձգութեան են ենթարկվում ու մեռ-  
նում իսկցին, գորտերի շնչառութիւնը  
իսկցին կտրվում է երբ նիկոտինի կաթիլը  
 $\frac{1}{100}$  մասը անգամ անցնում ենք նրա կա-  
շու աակը. մի շեշ ջրի մէջ մի կաթիլ  
նիկոտինը հերկիք է, որ ձկան մի քանի  
բոսէից մեռցնէ:

Կարծիք չկայ, որ ծխախոտը իրեն մէջ  
նիկոտին պարունակելով իւր սպանիչ  
ազդեցութիւնը անում է, թէև աննկա-  
տելի կերպով, նաև մարդի վերայ, որևէ  
հաստատուած է զիտնականների հետազօ-  
տութեամբ և նրանց փորձերով:

Նայ զբարս զբար, ովհար չ մայստաց  
որդինայ և է զաման՝ առծեարա մ տառաք  
քիշկոտիւնի ներգոլութիւնն. ՄԱՅԻՆԵԺ  
-ոնն ա Խափիլունի ո՛ւ առծեարաց  
զարդին կը ԶՄՈՒԱԾՔԻ ՎԵՐԱՅ; խոյ Խառ  
միջնար զամանացի զար Խափիլունիցի  
-առ նիկառինը իբրև թղյն ներգործում է  
զիսաւորապէս զիսի ու զեղի, մէջքի ծուծի  
և նեարդերի վերայ:

Նիկոտինով մի աստիճան թունաւորու-  
ած մարդի զբարնը սկսում է ցաւեր պլ-  
տօքար մարմինը թուլանար վերանքը  
նախութիւն գալ տեսողութիւնը և լա-  
զութիւնը նուազիր աստիճի եզած ժա-  
մանակը մարդ կորցնում է զիսակցու-  
թիւնը, ուզիղ շարժուածքը, պժուարա-  
նում կամ կարգում չնշառութիւնը և  
վերջապէս ջղաձղութեան ենթարկում:

Նիկոտինի մի փոքր քանակութիւնը  
մարդի շողենքը (լուծունքը) թափել է

ապշին, պշտուահում է և ընդհակառակը,  
որ չնչուիան զործարանի մասներից շատ  
քիչ է լորձունք զուրս զալիս որից և ծխողի  
ձայնը փոզում է, չնչափողը կոշտանում  
շուտ շուտ հավում է կուրծքի ցաւ զբռու,  
ծխելուց պատահում է մինչև անփամ  
արթնչոսութիւնն, ուստի և բժիշկները  
խորհուրդ են տեսնուեց որ թոքախառվ  
չի անդները և առհասարակ թմւլակազմ  
մարդիկ ամենելին չժիշին. Առաջնական  
Առդզիսի Աշկոկ բժիշկը հաստատում  
է որ ծխելուց ոչ միայն կարող է կոկոր-  
դի բարքուրումն առաջանալ այլ և լորձնա-  
թաղանթը փշանալ: Առոքը ամ առ  
ժայռի և որ բերանից և թէ ստամոք-  
սից բարձունք է դուրս զալիս որ խառ-  
նուելով կերակրին, նրան զիւլամարտէ  
շնուռմ: Ծխողներից լորձունքը կամ չա-  
փաղանց է դուրս զալիս և կամ նուազ  
երկու դէպքումն էլ ի մնաս առողջու-

թեան մարդի ախորժակը թուլանում է, առաւօտները սիրար խառնում ու թափում. զբան ենթարկուած են մանաւանդ առանց այդ էլ ստամբուր խանգարուածները:

Փր. Տիգմանը հաստատում է որ չափանց թունդ ծխախոտ կամ սիրար ծխելուց սովարաբար առաջանում է բերանի, կատիկի, կոկորդի և շնչափողի լորձնաթաղանթի բորբոքումն:

Դիտուած է, որ ծխախոտը թուլացնում է և աչքի աեսողութիւնը. աչքացաւ պատճառում մինչև անգամ կուրցնում: Նա զրգուում է սրտի բարախումը և կամ թուլացնում, որով և հետեւում է արեան շրջանագարձութեան խանգարումն:

Նիկոաինով թունաւորուածի շնչառութիւնը սկզբում արտադ է լինում, ապա դանդաղանում է և վերջապէս կորփում:

Եթէ մի լողի աչքի առաջ ունենանք, որ ծխախոտի ծիրի մէջ զտնփում են և այս վտանգաւոր թոյնելը—ֆէնօլի, ամմեակ, սինիլի թթւուտ, այն ժամանակ հականալի է թէ ինչ փորձանքի է մատնում իրեն ծխախոտ ծխողը, մանաւանդ որոնք սովորութիւն ունեն ծուխը կուլ տալու:

Ծխախոտը գործ են ածում ծխելու, իբրև բռնոթի քաշելու և ծամելու համար. կարծիք չկայ, որ նրա տուած վլասն էլ կախումն ունի դրանց գործածութեան եղանակից և քանակութիւնից և ծխախոտի թնդութիւնից:

Ա. Ծխելու համար գործ են ածում սիրարը՝ այն է ծխախոտի գլանակը, պապիրոսը, կտրատած թամբաքուն թղթի փաթեթի մէջ և կամ լոկ թամբաքուն ծխամորչի համար:

Սրանց մէջ ընալելին կարելի է համարել երկար կոթով ծխամորչը ուր ծուխը

սառչում է և կազմովթիւնը շատ ու քիչ փոխում մանաւանդ փոխարկվում է ծուխը նարդիլէի մէջ, երբ անց է կենում ջրից:

Սիդար ծխողը աւելի նիկոտին է ներս ընդունումքան պապիրոս կամ չիրուխքանը, ինչեւ որ նա թէ ծխում է թէ ծծում:

Սիդարը, պապիրոսը և կարճ կոթով չիրուխը փացնում են և ատամների է մալը ու սեացնում:

Չիրուխը կարող է շրթունքների վերայ վասնվաւոր ուռուցներ առաջացնել և ատամները մաշել ու ցաւ պատճառեր:

Բ. Բ. Ա. Ո թին, որի պատրաստութեան մէջ մանում են և շատ նիւթեր կեղծելու համար, զրդուում է ջղերը, փաշտալ տալիս, քթից և աչքերից ջրեր թափեցնում և պակսեցնում կամ փացնում հոտառութեան դրայարանի:

Մի քանի ագահ քաշողներ բռնոթին

քթով խմելուց, քթի մաղասի հետ մի մասը կուլ է զնուում ստամբուր, ուր նիւթաբինը լուծուելով տարածվում է մարմնի մէջ և ներպարձում, ուղեղի և արեան շրջանագարձութեան վերայ: Բայց այդ բռնոթաքաշներից մի անախորժ հոտ է փչում, նրանց շորերը միշտ թամբարուով կասես ողողուած են, կուրծքը դեղնուած, բեխերը ներկուած և քթածակերից բռնոթու խմբուած փշասանքներ կախ, որ աեսնողին զզուանք և տհաճութիւն է պատճառում:

Գ. Թ ա մբ ա ք ու ն ծ ա մ' լ ու ս ո փ ու ր ու թիւնը որ տարածուած է զիստուարսպիս նաւասահների մէջ, ինչեւ որ արգելվում է նաւի այս կամ այն մասում ծխել ամենքից փաննվաւորն է, ծամելուց բորբռումն է պատճառում բերանում, զպուում է լորձնական ջղերը, լորձունք թափել աալիս, որից առաջանում է ստա-

մոքսի ցաւ. և մարմնի նիշարիլ իսկ  
թամբաքուի կուլ գնալով սիրտ է խառ-  
նում, ցնցում, ուշաթափութիւն, կա-  
թուած և մինչեւ անգամ մահ պատճա-  
ռում:

Սանդովլ բանաստեղծը վախճանուած է  
մի բաժակ զինուց, որի մէջ լուծուած  
է եղել թամբաքուն:

Պատմում են երեք երեխայի մի օրում  
վախճանուելիք, մի ինչ որ զիւանդութեան  
համար նրանց զլուխը թամբաքաջրով  
լուանալուց:

Եթէ այս ամենի վերայ աւելայնենք  
որ ծխողները մեծ մասամբ գործ են ա-  
ծում և թունդ խմիչքներ, հասկանալի  
կրլինի ուրեմն թէ որչափ աւելի մնաս է  
կրում մարգի կազմուածքը, մանաւանդ  
եթէ գործածողը գեռահաս է, թոյլ է:

Բազմաթիւ օրինակներով հաստատու-  
ած է որ 9—15 տարեկան ծխող երեխա-

ների մարտողութիւնը զրեթէ միշտ խան-  
գարուած է միաքը բթացած և իրենք  
հակումն ունին դէպի թունդ խմիչքները:  
Վիճակազբական տեղեկութիւնները  
ցցց են տալիս, որ ծխող աշակերտների  
մտաւոր ընդունակութիւնը աւելի նուազ  
է քան ծխողներին և թէ թամբաքուի  
գործածութեան հետ աւելանում է և  
խելագարների թիւը:

Ե.

ԾԽԱԽՈՑՔ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ:

Ծխախոտի մշակութիւնը զիւղանաե-  
սութեան մէջ կարելի է առաջին շա-  
հաւէտ ձիւղը համարել: Նայելով  
նրա մշակութեան ծախքերին՝ որ Խրիմի  
մէջ հասնում է գեսեատինին 700—1000  
լուբլի և արգիւնքին՝ 900—1500 լուբլ.

քիչ արգիւնք չէ 200—500 լուր նեղ  
պլազմնի համար ստվայն երբ կամեմու-  
տելու լինինք այդ օդուարը թէ նրա միւ-  
շակողի և թէ աերաւթեան ստացած  
մաքսի այն վնասի հետ՝ որ իրում է  
հասարակութիւնը, կհամոզուինք, որ վիւ-  
նասը աւելի մեծ է, քան կարծուած  
օդուարը:

Արդարեւ նայեցէք թէ ծխախոսի միւ-  
շակութիւնը որչափ ընափը հոգ է խում մ-  
երկրագործի ձեռքից, որի համար ցորե-  
նի և այլ հացարցյաերի մշակութիւնը  
աւելի նշանակութիւն ունի, թանի քա-  
նի աշխատող ձեռքեր զբաղուած են  
գործարսներում և ամբողջ օրը նիկո-  
տինով ապականուած օվը են ծծում,  
որից և անդադար պլացաւ, փորացաւ  
են ունենում, թաշում է երեսի զոյնի,  
մաշվում են և փաղացաս ծերտնուած  
մը քափ մեծ ծախը է նատում խեղճ ու-

անանկ ընսանիքներին երբ նրա անդամ-  
ների մէջ մի քանի ծխոզներ կանչ իրա-  
ւացի չէ միթէ որ ֆրանկինք ասում է  
ծխելու ախար աւելի թանգ է նատում  
քան չորս երեխացի կրթութիւն տալը:

Միթէ ցաւալի չէ աեսնել որ մարդիկ  
իրենց Ո միւնական գուաղճութեան  
համար ամբողջ ասրբին թռքերին անընդ-  
հատ ննանիք են տալիս մաքսար օդի փո-  
խարէն ծխախոսի ծուխը, որը ինչպէս  
ահսինք մարմնի կազմներապութեան, վր-  
նասելուն հետ ապրեկան զուա կորուստ  
ունի ասորին գասակարգը 20—50 լուրի,  
իսկ բարձր գասակարգը 50—100 լուրի,  
աւելի բուրբները:

Աերջապէտ պէտք է յիշել որ ամբին  
քանի քոնի գիւղի ու քաղաքներ են  
զաք զնուամ հրդեհների, որոնց պատճառը  
մեծ մասամբ ծխախոսն է, որով և հա-

զարաւոր անձինք զըկվում են իրենց բու-  
լըր կարողութիւնից և գոնէ դուռն  
ընկնելով ողորմութիւն խնդրում:

9.

ԹԵՐ ԵՒ ԳԵՄ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԾԽԱԼՈՒՑԻ ՄԱՍԻՆ:

Թէ արդարեւ ծխախոտը մի անբնական զուարձութիւն է, որի դէմ ապստամբ-  
վում է թէ մարդի առողջ գատողու-  
թիւնը և թէ նոյն խսկ սասամօքսն ու  
ջղերը, այդ բոլորովինք պարզ է, եթէ  
աչքի առաջ ունենանք նրա ներգործու-  
թիւնը հենց առաջին անգամ սկսողի  
վերայ:

Յիշում եմ թէ ինչպէս մի օր տանից  
սուս ու փուս մի ծխախոտ թոցըի ու  
քաշուելով մեր պարտիզի մի անկիւնը  
սրտատրովի վառեցի ու մի առանձին ա-

խորժակով ծծելով մինչեւ կէսը հասցըի:  
Մի քանի լսովկից աչքելա սեացին, գը-  
լուխս պացյա եկաւ, բերանիս ջուրը  
սկսեց վագել և ես թուլացած ընկայ  
գետնին, մի գողդողոց ընկնելով ամբողջ  
մարմինս. կէս ժամից հազեւ ուշքի եկի,  
ոտքով արորեցի անիծեալ ծխախոտի կր-  
տորը և այն օրից ուխտեցի այլ ևս չը  
մօտենալ նրան:

Ես չեմ կարծում որ ամեն մի սկսող  
զգուանկով ընդունած չլինի այդ սա-  
տանի բուր վառը և միայն մեծե-  
րի օրինակից խրախուսուած՝ անափա-  
ռութեամբ առաջ առած այդ ախտը.  
մի ախտ՝ օրից այլ ևս պրծում չկայ,  
ինչպէս խոստովանում են հաստատակա-  
մութիւն չւնեցող անձինք:

Թէ ունակութիւն արած ծխողների  
վեցակը որչափ ծանրանում է, ինչ նե-  
ղութիւններ են կրում, երբ թամբաքուն

պակասում է ինչ զոհաբերութիւններ  
չեն անել մի փոքր մախոր կի համար,  
ամենքը շատ բան լսած ու տեսած կը  
լինին: Բաւական է ասել որ նրանք չեն  
մարսում կերած առանց ծխելու, ձեռքը  
բանի չէ գալիս առանց ծխելու, չեն քը-  
նում, չեն դարձնում առանց ծխելու,  
մի խօսքով կատարեալ սալուկ են ծխա-  
խոտի թմբիցուցիչ ազգեցութեան, որ  
կաշկանդում է մատածողութիւնը ցնցում  
ուշադրութիւնը և թուլացնում յիշողու-  
թիւնը:

Պատմում են որ մի օր ծուլնից բե-  
րուած քրիտական յանցաւորների մի  
խումբ Վիօնի բանտերից մէկում պիտի  
տեղաւորէին. զիանք եկել էին քաղցած,  
ծալաւ, յոգնած, ոտները շպթայակապ. շո-  
պեկառքից դրւբս գալուց ամենեին չեին  
մտածում հացի զինու հանդսատութեան  
վերայ, այլ որ լինոց մի քիչ ծխելու-

թամբաքի տան: Բարզութեացաւ, ունենալ զօնայմ  
Բարզութեացաւ ասում է. «Հացի և թամբա-  
քուի ընարութեան մէջ, ծխողը միշտ  
նախապատվում է երկրորդը»:

Սյսպէս հանքերի գետնափորերում մի  
քանի օրերով կենդանի թաղուածները  
չեն տրանջացել հացի ու ջրի նեղու-  
թեան համար, այլ թամբաքուի: Թամբա-  
քուի պակասութիւնից մեղ պատահել է  
տեսնել թէ ինչպէս մշակները ծառի չոր  
տերեները ձեռքում փշրելով՝ լորել են  
չերուխները քաշել և թէ ալեկոծու-  
թիւնից աղատուած ծովագնացները ինչ-  
պէս ամենից առաջ թամբաքուի վերայ  
են ընկել:

Սյժմ հարցնենք ի՞նչ բան է օգնել և  
այժմ օգնում է ծխելու ախտի տարա-  
ծուելուն: Արդեօք նա բոպէական հաջոք  
չէ, նա մօդայի պէս մի բան չէ, որին  
անդիտակցաբար հետեւում է մարդ:

Արդեօք ծխելը, քաշելը, կամ ծամելը  
այնպիսի մի կարիք է կամ մի տեսակ  
զուարձութիւն, որին անկալիելի է ուրիշ  
բան փոխարինել: Կորելի է ծխախոտը  
մարդին հոգեկան համայք է պատճա-  
ռում, ինչպէս երաժշաութիւնը ու դե-  
ղարուեսար:

Աերջապէս դույէ ծխախոտը ծառա-  
յում է իբրև դեղ, որի օգնութեամբ  
մարդ թեթևցնում է իւր ցաւը կամ հի-  
ւանդութեան առաջը առնում:

Եթէ որ ծխելը միայն ժամանակառոր  
համայք պատճառող լինէր, ինչպէս ելքենն  
մարդկանց պարիի ու կեղծամ զնելը կամ  
կանանց կրինօլինն ու յաճախակի փո-  
խուղ մօլաները, վաղուց արդէն թո-  
ղուած պիտի լինէր և ծխելը բայց ընդ-  
հակառակ տեսնում ենք որ գնալը ա-  
ւելի է տարածվում և դարերու գցու-  
թիւնը պահպանում, ուրեմն պիտի հե-

ակցնել որ ծխելու ախտը ուրիշ հիմն  
ունի:

Աչքի առաջ ունենալով որ բոլոր նը-  
շանաւոր ազգերը ծխախոտը կամ ծը-  
խում են կամ քաշում և կամ ծամում,  
պէսք է հետեցնել որ նա գուցէ հոտո-  
տելիքի և ձաշակելիքի համար համով  
հոտով մի բան է ներկայացնում:

Թէև ասում են ձաշակի համար ըլ  
պէտք է վիճել այնուամենայնիւ հավիւ  
թէ գտնուի մէկը, որ հաստատէ թէ  
մարդս այն պատճառաւ է ծխում կամ  
ծամում, որովհետեւ նա շաքարի կամ  
դրա նման մի բանի համ ունի, որ հա-  
ճելի է ձաշակելեաց: Սյնակէս չէ կարելի  
պնդել թէ նա մի առանձին անուշաշո-  
տութիւն ունի և պյտ է եղել տալա-  
ծուելու պատճառը:

Այսօր բազմաթիւ հոտաւէտ իւղեր են  
պատրաստում, բայց և ոչ մինը նրանցից

այնպէս յայտնի չէ, այնպէս տարածուած  
չէ, ինչպէս ծխախոտը. դեռ թող-  
նենք, որ ծխախոտի ծուխը չծխողների  
համար անտանելի է և շատերին գիւա-  
ցաւ է պատճառում և սիրո թափել  
տալիս:

Արդեօք մարդ ծխելու, քաշելու կամ  
ծամելու մէջ մի հոգեկան զուարձու-  
թիւն չէ գտնում, որ ազդում է և տե-  
սութեան զգայարանի վերայ:

Նատերը պատահած կիենին թէ ինչ-  
պէս մի քանի ծխողներ բերանից ծուխ  
են գուրս թողում կամ զանազան մէծու-  
թեամբ օղակներ շնուրմ և իրենք հե-  
տեերով այդ ոլոր մոլոր շերտուով սլա-  
ցող ծիեն, մոռանում են իրենց, մոռա-  
նում շրջապատողները և մոքով երազա-  
կան աշխարհը փոխադրվում...

Սակայն հազիւ թէ գտնուի մէկը, որ  
ապացուցանէ թէ ծխելը, ծամելը կամ

բոհոթի քաշելը մի հաճելի տեսարան է  
ներկայացնում:

Նրեւակայեցէք մի այսպիսի պատկեր.  
սրճանոցում կամ ժողովատեղում բազ-  
մութեան մի մասի, լուռ ու մունջ նըս-  
տած ծամում է թամբաքուն ու թքո-  
տում, միւսները բերանից կամ քթից  
անդադար ծխի քուլաներ են թողնում,  
և վերջապէս մի մասն էլ բռնոթին խը-  
ռնուցով վեր է քաշում ու փոշում:  
Կարծում ենք որ ամեն մէկը կհամաձայ-  
նէ, որ այսպիսի պատկերը շատ քիչ գը-  
րաւիւ է:

Վերջապէս ծխախոտը այն միջոցներից  
մինը չէ, որին մարդ դիմում է անզի-  
տակցաբար հիւանդութիւնը բուժելու  
մտքով: Կամ իրաւացի չէ, որ ասում են  
ծխախոտը կոտրում է մարդի քաղցա-  
ծութիւնը և ծարաւը:

Ոմանք ենթադրում են որ ծխախոտի

ծամելը ապատում է նաւաստիններին  
ծովային ճանապարհորդութեան ժամա-  
նակ ցի՞նդ ասուած հիւանդութիւնից,  
բայց վերջը ապացուցուեցաւ որ շատ  
փոքր է նրա կատարած գելը և թէ  
ծամելը զիսաւորապէս թմրեցնում, վըս-  
դեցնում է նրանց մի տեսակ, որ չձանձ-  
րանան:

Առաջներում կարծում էին որ ծխա-  
խորը առողջարար մի դեղ է բոլոր ցա-  
ւերի դէմ:

Էռման հաստատում է, որ Սատեակ-  
ները մոխրախառն բռնոթին հոտ են  
առնում երեսները սաստիկ ցրաից պաշտ-  
պաներու համար:

Ճանապարհորդների ասելով Մեկսիկա-  
յի հին բնակիները գործ էին ածում  
ծխախորը իրեւ ատամնացաւի դեղ. ո-  
մանք համարում են օձի կծելուն գեղ-  
թափ, այլք զիսացաւի, թանչե, աղիքնե-

րի շարժողութիւնը արագացնելու մին  
միջոց: ու անոնց զայ մասունքները  
բայց այժմ հաստատուած է, որ ծխա-  
խորը իրեւ գեղ աւելի վեսս է բերում  
քան սպառա, ուստի և բժշկականութեան  
մէջ բոլորավին թողնուած է և բուրիչ  
անվեսս միջոցներ փոխարինած:

Ու պահաս անչեթեթ է և այն կար-  
ծիքը որ ասում են թէ ծխախորը կոտ-  
րում է մարդի քաղցածութիւնը և ծա-  
րաւքը Յայտնի է որ նա ու սննդարար  
զօրութիւն ունի իւր մէջ և ոչ էլ զո-  
վացուցիչ այլ խանգարելով սասամքսի  
դործողութիւնը՝ կապում է ուտելու ա-  
խորժակը ի վեսս առաջութեան և  
ընդհակառակին չորացնելով կոկորդը աւե-  
լի ծարաւացնում:

Սակայն այս ամենը չեն պարզում ծը-  
խախոր գործ ածելու շորժառիթը:  
Հարցուքը ծխողներին թէ ինչո՞ւ էք

ծխում, նրանք էլ ձեզ մի գրական պատասխան չեն տալ, կասեն որ ծխում են, որովհետև ոչ միայն դուք է գալիս իրենց, այլ և անհրաժեշտ մի կարիք է և թէ իրենք հետեւ են ուրիշների օրինակին և այժմ սովորութիւն է դառել:

Ճիշտ է, ծխախոտը սկզբում չնայելով որ տհաճութիւն է պատճառում, սակայն այդ բաւական է, որ մարդ նորից կրկնէ այդ փորձը ակամայից և վերջը բոլորովին գերի դառնայ նրան:

Ծխելու անհրաժեշտութիւնը կայանում է նրա մէջ, որ ծխախոտը ծխելու, քաշելու կամ ծամելու ժամանակ ազդում է քթի, բերանի կամ չնչափողի նեարդերի վերայ և գրգռում նրանց:

Մարդ քանի յաձախ է այդպիսի զբումանը դիմումի, այնքան նա աւելի է պահանջ դառնում Ծխողը անդիտակ-

ցաքար կարիք է զգում ծխելու նրա համար, որ նա նորից զբգուելով նեարդերը, իրեն աւելի աշխայժ, աւելի պժ է տալիս սովորական աշխատավթիւնը շաբունակելու:

Այդպէս առժամանակ շարունակելով նեարդերը կորցնում են իրենց բնակունութելը խանճարվում ու թուլանում, ուստի նորից զբգուելու համար պէտք է լինում աւելի զօրեղ միջոց գործ գնել: Ահա թէ ինչու սկզբում օրը երկու երեք անդամ ծխողը մի քանի ժամանակից յետոյ արագացնում է ծիելը և վերջը թունդ թամբաքու գործ ածում: Ահա թէ ինչու շատերը պատիրոսը կամ սիրարը մէկ մէկու ետեւից վառում և բերաններից քրոց չեն թողնում և վերջապէս թունդ թամբաքուի զբգումանն էլ չբաւականացած՝ թունդ խմիչքների դիմումի, որ այժմ աւելի մեծ ուժով կարողանայ նեարդերը

զբգուել թամբաքուի բաց թողած դա-  
տարկութիւնը լցնել:

Ծխախոսի տուած մտասները յիշելուց  
յետոյ մէջ բերենք և Մոնթեսքիսի կար-  
ծիքը Ամեն դպր, ասում է այդ հաշառ  
կաւոր հեղինակը, ունի ինչպէս իւր առ-  
վորութիւնները նոյնակեմ և իւր գժու-  
թիւնները, որից ոչ մի ժողովուրդ չէ  
կարողանում ազատ մնալ: Միթէ յիրաւի  
գժութիւն, վարքի ապականութիւն չէ  
տեսնել ամբողջովին մի ժողովուրդ, մի  
հասարակութիւն, մի ընտանիք թողած  
հայրական օջախը, կուրօղէն վազում է  
գէպի մի սպանիչ մի դժուաճան թոյն  
մի թոյն որ միւնոյն ժամանակ հարուա-  
ծում է թէ առողջութեան, թէ ընդու-  
նակութեան, թէ նիւթականին, թէ մար-  
դի ֆիզիքական և բարօյական վիճակին,  
մինչեւ անդամ մի ազդի քաղաքական գո-  
յութեան: Եւ միթէ բոլոր գժութիւն-

ների մէջ ամենավատը չէ այդ որ քա-  
շում աանում է իրեն հետ մի ազդ գէպի  
ինքնասպանութիւն այդ թոյնից: Ե.

Եթե Ա.Ռ.Ա.Զ.Ն. Ա.Ռ.Ե.Ե.Լ. բար  
գաւական չէ որ մարդ միայն գիտենայ  
ծխելու վնասակարութիւնը, պէտք է նա  
աշխատէ և վնասի առաջն առնել Պատ-  
ժական օրէնքները ինչպէս ասացինք, գր-  
րեթէ օգուտ չբերին, ինչու որ արդեկ-  
լով անկարելի է որ ծխելու բռնոթի  
քաշելու կամ ծամելու ախտը քշանայ.  
տէրութեան աջակցութեան հետ հար-  
կաւոր է և հասարակութեան օգնութիւնը  
մատաղ սերնդին ո՞ր առաջ հասկացնելու  
ծխելու վնասակարութիւնը և ցցց տա-  
լու թէ ինչ բանի մէջ է կայանում մարդին  
իսկական բաղդաւորութիւնը բաւականու-

թիւնն ու թշուառութիւնը: Խոկ զլոս հա-  
մար հարկաւոր է մտաւոր լոյս,  
կը թութիւն և բարոյական դաս-  
տիւարակութիւն:

Արտասահմանում ծխախոսի չափա-  
զանց գործածութեան առաջն առնելու  
համար բացի մի շաբք բժիշկների, զիտ-  
նականների գրուածներից կան և հակա-  
ծխողների ընկերութիւններ ամեն մեծ  
քաղաքում:

Նշանաւոր է Փարիզի մէջ ֆրանսիական  
ընկերութիւնը թամբաքուի ի չարն գործ  
դնողների դէմ 1868 թ. հիմնուած:

Սյու ընկերութեան շրջաբերականի  
մէջ ասուած է. պիտութիւնը և փորձը  
ցոյց է ասուած, որ ծխախոսի գործածու-  
թիւնը ժողովրդի առողջութեան վերայ  
վատ ներդրծութիւն է անում. այսօր  
հաստատուած է որ խելքի տկարութիւնը,  
առհասարակ կաթուածները, շրթունքի

բերանի և ստամբուի պալարները մար-  
տովութեան խանգարումը աչքի տկա-  
րութիւնը և այլ հիւանդութիւններ  
թամբաքուի գործածելուն հետ համըն-  
թաց աւելանում են:

Նշնպէս հաստատուած է, որ թամ-  
բաքուի գործ ածելը թուլացնում է ըն-  
տանեկան և ընկերական կապերը և հա-  
րուածում հասարակութեան բարգակա-  
նութիւնը:

Փարիզի ճեմաբանի անդամ գօքտօր  
ժողին մէջ բերելով թամբաքուի առւած  
կասմները, գոյութեամբ խօսում է վերը  
յիշած Ընկերութեան գործունեութեան  
մասին և ասում. «Եսպիսի մի թշուա-  
ռութեան դէմ մաքարելու համար բժիշկ-  
ներից, առողջապահութեան հսկողներից  
և մարդասերներից կազմուած է մի մաս-  
նախումբ որի նպատակն է ամեն զասա-  
կարգի, ամեն հասակի անձանց, մանա-

ւանդ երիտասարդութեան զգուշացնել  
թամբաքուի գործածելու վտանգների  
դէմ:

Ամբողջ աշխարհը, ասում է նա, հետա-  
քրքրուած է այդ Ընկերութեան յաջողու-  
թեան վերայ—թէ ծխողները՝ որ մի ամօ-  
թալի կարիք են ստեղծել և մնասում իրենց  
առողջութիւնը, թէ չծխողները՝ որ նեղվում  
են թամբաքուի հոտից, թէ հարուստը՝ որ  
իւր պարապ ժամերը նուիրել է մի  
դժուար ու անդիմադրելի սովորութեան,  
թէ մշակը՝ որ ծխելու և խմելու համար  
շատ անգամ զրկում է իւր կնոջ, իւր երե-  
խաներին կարեոր բաներից, թէ ազգասր՝  
որ վրդովում է երբ իւր այդ ախախն չէ կա-  
րողանում բաւականութիւն տալ, թէ ըն-  
տանիքի մայրը՝ որ կսկծում է տեսնելով իւր  
որդուն անձնատուր եղած շուայրութեան  
և զագարկապորտութեան և թէ երիտա-  
սարդ նորահարարը՝ որ իւր միակ բաղ-

ձանքից, այն է ամուսնանալուց յետոյ,  
սրտամաշնայում է թէ ինչպէս իւր  
կետնքի ընկերը թողած հարսնութեան  
առաջասարք, քաշփում է ծխելու սենեակը  
կամ մի այլ անկերւն այդ անպիտան խոսք  
ծխելու»:

Փարիզի Ընկերութիւնը քաջալերու-  
թիւն գանելով ամեն կողմից, տուած է և  
աալիս է հասարակութեան մեծամեծ օ-  
գուաներ թէ իւր ժողովներով և թէ բերա-  
նացի ու զրաւոր խորհուրդներով:

Յանկալի էր որ մեզանում ևս կարևոր  
ու շաղրտութիւն դարձնէին այս կենսական  
խնդրի վերայ և կազմուեր քաղաքներում  
ու մեն գասակարգերից «ԶՃԽՈՂՆԵՐԻ ԸՆ-  
ԿԵՐՈՒԹԻՒՆ», որի նպատակը լիներ ծր-  
խախուի չափազանց աալածման առաջը  
առներ, չծխողների թիւը հետզետէ շա-  
տացնել և զրանցից ստացած մասնաւոր  
առւրգով՝ ժողովրդական զրքերի հրատա-

լակութեան նպաստել կամ մի այլ օդակար նպատակի ծառայացնել:

Մենք համոզուած ենք, որ «ԶծԽՈՂ-ՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ» մեծ յաջողութիւն կարող է ունենալ եթէ հաստատակամութեամբ այս բանին ձեռնամուխ լինի:

Եթէ ամեն մի քաղաքում՝ 100—200 հոգի չծխողներ գտնուին կամ ծխողներ, որոնք իրենց առողջութեան խնայելով՝ նուազեցնեն ծխելեք պապիլոնների քանակութիւնը և օրական 15—20 պապիրոսի փոխարէն՝ 10—15ը ծխէնն և այդ 5-ի գինը—2 կոպէկը «ԶծԽՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» տային արդարե ընկերութիւնը իւրաքանչեւր տարի կունենար 730—1460 ր. մի գումար, որով կկարողանար շատ թշուառների արտասուբը սրբեր շատ սրբերի ու տնանիների ինամատարը լինել:

Յուսով ենք որ մեր առաջարկութիւնը մի արձագանք կդանէ թէ ծխողների և թէ չծխողների մէջ և ծխելու չարիքը կփոխարինուի այնպիսի մի բարինպատակ գործի, որ վայել է ամեն մի ազնիւ ու պարտաճանաչ քաղաքացու:

2013



ՀԱՅՐԱՅՔ ԳՐԱԴԱՐԱՆ  
Պոլիտեխնիկական գրադարան  
7/II 1922  
Ա. Ա. Խաչատրյան  
ԱՅՍԻ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՐ

զույթապահուա զն որ քեմ խռան  
և պատրաստ է անոր գուղակու մի  
զավաց աղեած և շն պատրաստ է ան  
խռանակից ու խարուց դաստիակուն  
ու պահու մի մաս և լուր որ մեջը  
բարակարաց խռանակից

3508



